ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 մայիսի 2024 թվականի N 765 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 13-Ի N 265-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի «Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների անվանացանկը հաստատելու, ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների պետական կառավարման մարմին սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունվարի 10-ի N 112-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 265-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) 1-ին բաժնում՝

ա. «Մ-1» պայմանանիշը և համարը տողի «Ավտոճանապարհի անվանումը» և «Երկարությունը (կմ)» սյունակները լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողերով՝

Լանջիկի տրանսպորտային հանգույց	0.7
Մաստարայի տրանսպորտային հանգույց	0.8

,

բ. «Մ-2» պայմանանիշը և համարը տողի «Երկարությունը (կմ)» սյունակում «380.5» թիվը փոխարինել «378.4» թվով,

գ. «Մ-9» պայմանանիշը և համարը տողի «Երկարությունը (կմ)» սյունակում «57.1» թիվը փոխարինել «59.2» թվով,

դ. «Ընդամենը» տողի «Երկարությունը (կմ)» սյունակում «1364.97» թիվը փոխարինել «1366.47» թվով.

2) 2-րդ բաժնում՝

ա. «Հ-1» պայմանանիշը և համարը տողի «Երկարությունը (կմ)» սյունակում «31.0» թիվը փոխարինել «31.27» թվով,

բ. «Հ-5» պայմանանիշը և համարը տողի «Ավտոճանապարհի անվանումը» սյունակում «/Հ-2/- Արգել - Արզական - Հրազդան» բառերը փոխարինել «/Հ-6/ (Նոր Գեղի)- Արգել - Արզական - Հրազդան» բառերով,

գ. «Ընդամենը» տողի «Երկարությունը (կմ)» սյունակում «2166.78» թիվը փոխարինել «2167.05» թվով.

3) 3-րդ բաժնի «3.1. ՀՀ Արագածոտնի մարզ» ենթաբաժնում՝

ա. «Տ-1-10» պայմանանիշը և համարը տողի «Ավտոճանապարհի անվանումը» սյունակը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «/Տ-1-84/ - /Հ-75/ (Արտենի)»,

բ. «Տ-1-16» պայմանանիշը և համարը տողի «Ավտոճանապարհի անվանումը» սյունակը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Ներքին Սասնաշեն (Տ-1-40)- Ներքին Բազմաբերդ (Տ-1-68)»,

գ. «Տ-1-35» պայմանանիշը և համարը տողի «Ավտոճանապարհի անվանումը» սյունակը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «/Տ-1-84/ (Հացաշեն) - Սորիկ»,

դ. «Տ-1-50» պայմանանիշը և համարը տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տող՝

Տ-1-51	/Հ-21/-Վարդաբլուր	2.0

,

ե. «Տ-1-63» պայմանանիշը և համարը տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Տ-1-63	/Տ-1-84/ (Թաթուլ) – Կանչ-Հակո	12.1

,

զ. «Ընդամենը» տողի «Երկարությունը (կմ)» սյունակում «425.4» թիվը փոխարինել «427.4» թվով.

4) 3-րդ բաժնի «3.3. ՀՀ Արմավիրի մարզ» ենթաբաժնում՝

ա. «Տ-3-1» պայմանանիշը և համարը տողի «Երկարությունը (կմ)» սյունակում «7.7» թիվը փոխարինել «6.5» թվով,

բ. «Տ-3-36» պայմանանիշը և համարը տողի «Երկարությունը (կմ)» սյունակում «4.7» թիվը փոխարինել «5.0» թվով,

գ. «Տ-3-45» պայմանանիշը և համարը տողի «Երկարությունը (կմ)» սյունակում «3.5» թիվը փոխարինել «3.2» թվով,

դ.«Տ-3-47» պայմանանիշը և համարը տողի «Երկարությունը (կմ)» սյունակում «9.5» թիվը փոխարինել «7.3» թվով,

ե. «Տ-3-55» պայմանանիշը և համարը տողի «Երկարությունը (կմ)» սյունակում «4.0» թիվը փոխարինել «3.4» թվով,

զ. «Տ-3-68» պայմանանիշը և համարը տողի «Երկարությունը (կմ)» սյունակում «5.0» թիվը փոխարինել «2.5» թվով,

է. «Ընդամենը» տողի «Երկարությունը (կմ)» սյունակում «393.8» թիվը փոխարինել «387.3» թվով.

5) 3-րդ բաժնի «3.7. ՀՀ Շիրակի մարզ» ենթաբաժնում՝

ա. «Տ-7-67» պայմանանիշը և համարը տողի «Երկարությունը (կմ)» սյունակում «1.4» թիվը փոխարինել «0.7» թվով,

բ. «Ընդամենը» տողի «Երկարությունը (կմ)» սյունակում «496.4» թիվը փոխարինել «495.7» թվով.

6) 3-րդ բաժնի «3.8. ՀՀ Սյունիքի մարզ» ենթաբաժնում՝

ա. «Տ-8-8» պայմանանիշը և համարը տողի «Ճանապարհի անվանումը» սյունակը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Աշոտավան (Տ-8-42)-Բռնակոթ-Մուցք (Տ-8-51)»,

բ. «Տ-8-47» պայմանանիշը և համարը տողի «Ճանապարհի անվանումը» սյունակը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Շաղատ (Տ-8-51) - Բալաք»,

գ. «Տ-8-106» պայմանանիշը և համարը տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տող՝

Տ-8-107	/Տ-8-51/ (Շաղաթ) – ՀՀ սահման	12.6

,

դ. «Ընդամենը» տողի «Երկարությունը (կմ)» սյունակում «499.0» թիվը փոխարինել «511.6» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2024 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

24.05.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ